



## Քաղաքային հյուրանոցների աշխատողների նվազագույն աշխատավարձի մասին հրամանագիր Ծանուցում հյուրանոցի աշխատողների համար



Այս հյուրանոցը ենթարկվում է Քաղաքային հյուրանոցների աշխատողների նվազագույն աշխատավարձի մասին հրամանագրին՝ (CHMWO) համաձայն Լոս Անջելեսի քաղաքային օրենսգրքի (LAMC) բաժին 186.00-ի:

### Քաղաքային հյուրանոցների աշխատողների նվազագույն աշխատավարձ Դրույքաչափը ուժի մեջ է մտնում 2026թ. հուլիսի 1-ից: ԺԱՄԸ \$25.00

Այս հյուրանոցի գործատուն պարտավոր է հյուրանոցի աշխատողներին վճարել նվազագույն աշխատավարձ: Նվազագույն աշխատավարձը կփոփոխվի ամեն տարի՝ համաձայն LAMC-ի բաժին 186.02.A-ի:

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը.	Կիրառելիություն*	Ժամավճար
9/8/2025	60 կամ ավելի սենյակներ ունեցող հյուրանոցներ	\$22.50
<b>7/1/2026</b>	<b>60 կամ ավելի սենյակներ ունեցող հյուրանոցներ</b>	<b>\$25.00</b>
7/1/2027	60 կամ ավելի սենյակներ ունեցող հյուրանոցներ	\$27.50
7/1/2028	60 կամ ավելի սենյակներ ունեցող հյուրանոցներ	\$30.00

\*Համաձայն LAMC-ի բաժին 186.01.C-ի՝ հրամանագրի դրույթները ներառում են օդանավակայանի հյուրընկալության գոտում (AHEZ) գտնվող 50 կամ ավելի սենյակ ունեցող հյուրանոցները:

### Առողջական նպաստի վճար Դրույքաչափը ուժի մեջ է մտնում 2026թ. հուլիսի 1-ից: ԺԱՄԸ \$8.15

Այս հյուրանոցի գործատուն համաձայն LAMC-ի բաժին 186.04-ի պարտավոր է վճարել ժամավճար առողջապահական ծառայությունների համար: Առողջապահական նպաստների դրույքաչափը ամեն տարի կփոփոխվի՝ համաձայն LAMC-ի բաժին 186.04.E-ի: Ստորև ծանոթացեք ձեր իրավունքներին.

**Ժամը \$25.00, գումարած առողջապահական ծառայությունների մատուցման համար ժամը առնվազն \$8.15:** Առողջության ապահովագրությունը ներառում է հետևյալ ծառայությունները. ատամնաբուժական, տեսողական, հոգեկան առողջության ծառայություններ և հաշմանդամության նպաստներ:

**ԿՍՄ**

**այն հյուրանոցի աշխատողների համար, ովքեր չունեն գործատուի կողմից տրամադրվող առողջական ապահովագրություն՝ ժամը \$25.00, գումարած ժամը \$8.15 = ժամը \$33.15:**

Եթե հյուրանոցի գործատուի առողջական ապահովագրության դրույքաչափը պակաս է ժամում \$8.15-ից, տարբերությունը վճարվում է հյուրանոցի աշխատողին որպես լրացուցիչ ժամավճար:

Առողջական ապահովագրության ժամավճարը արտաժամյա աշխատանքի դեպքում վճարելը պարտադիր չէ:

Համաձայն LAMC-ի բաժին 186.10.C-ի հյուրանոցի աշխատողը կարող է դիմել առողջական ապահովագրությունից հրաժարվելու համար, եթե նա առողջության ապահովագրություն ունի մեկ այլ ծրագրի շրջանակներում:

# Քաղաքային հյուրանոցների աշխատողների նվազագույն աշխատավարձի մասին հրամանագիր

## Ծանուցում հյուրանոցային ոլորտում աշխատողների համար

### Հանգստյան օրեր

Համաձայն Լոս Անջելեսի Քաղաքային օրենսգրքի (LAMC) բաժին 186.02.B-ի՝ հյուրանոցային ոլորտի գործատուները պարտավոր են լրիվ դրույքով աշխատողներին տարեկան տրամադրել առնվազն 96 ժամ վճարովի արձակուրդ և թույլատրել օգտվել տարեկան առնվազն 80 լրացուցիչ ժամ անվճար արձակուրդի հնարավորությունից:

Համաձայն LAMC-ի բաժին 186.02 B.1.(b)-ի՝ կես դրույքով աշխատող հյուրանոցի աշխատակիցն իրավունք ունի կուտակել վճարովի արձակուրդ՝ շաբաթական 40 ժամ աշխատող աշխատակցի կուտակած արձակուրդին համարժեք:

Հանգստյան օրերի ընդհանուր կանոններ.

Հյուրանոցի աշխատակիցն իրավունք ունի օգտվելու կուտակված վճարվող և չվճարվող արձակուրդներից <b>աշխատանքի առաջին վեց ամիսներից հետո</b> կամ ընկերության քաղաքականությանը համապատասխան՝ կախված նրանից, թե որով է արձակուրդը տրամադրվում ավելի շուտ:
Հյուրանոցի գործատուն <b>իրավունք չունի անհիմն կերպով մերժելու</b> հյուրանոցի աշխատակցի՝ կուտակված վճարվող կամ չվճարվող արձակուրդն օգտագործելու խնդրանքը:
Եթե հյուրանոցի գործատուի քաղաքականությամբ ավելի շահավետ պայմաններ նախատեսված չեն, չօգտագործված կուտակված <b>վճարվող</b> արձակուրդը կարող է հասնել <b>մինչև առավելագույնը 192 ժամի</b> :
Եթե հյուրանոցի գործատուի քաղաքականությամբ ավելի շահավետ պայմաններ նախատեսված չեն, չօգտագործված կուտակված <b>չվճարվող</b> արձակուրդի ժամանակը կարող է հասնել մինչև <b>առավելագույնը 80 ժամի</b> :
Երբ հյուրանոցի աշխատակիցը կուտակում է չվճարվող արձակուրդի առավելագույն ժամանակը, հյուրանոցի գործատուն պարտավոր է յուրաքանչյուր 30 օրը մեկ վճարել դրամական փոխհատուցում առավելագույն ժամկետից ավելի կուտակված վճարվող արձակուրդի համար:
Հյուրանոցի գործատուն չի կարող կիրառել որևէ աշխատանքային քաղաքականություն այս հոդվածի համաձայն վերցված չվճարվող արձակուրդը բացակայություն համարելու նպատակով, որը կարող է հանգեցնել կարգապահական պատասխանատվության, ազատման, հեռացման կամ որևէ այլ անբարենպաստ գործողության:

### Ծառայության վճարներ

Հյուրանոցի սեփականատերը հաճախորդներին ծառայություն մատուցող աշխատակցին(ներին) պարտավոր է բոլոր ծառայությունների դիմաց վճարել, որոնց համար հաճախորդներից գանձվում է վճար: Գումարները պետք է վճարվեն հյուրանոցի աշխատող(ներ)ին արդարացի կերպով և հյուրանոցի գործատուի կողմից հաճախորդին տրամադրվող ծառայությունների վճարների նկարագրությանը համապատասխան (LAMC SEC 186.03):

### Եկամտի հարկային արտոնություններ

Հյուրանոցի աշխատողները կարող են իրավասու լինել և դիմել Դաշնային եկամտի հարկային արտոնությունների համար (EITC): EITC-ի և ձևաթղթերի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք Եկամտի հարկային արտոնությունների թեժ գծին 1-800-829-1040 հեռախոսահամարով:

\*\*\*

**Լոս Անջելեսի գործատուները ենթարկվում են բոլոր՝ տեղական, նահանգային և դաշնային նվազագույն աշխատավարձի վերաբերյալ օրենքներին և աշխատանքային չափորոշիչներին:**

\*\*\*

CHMWO-ի հետ համապատասխանությունը կարգավորվում է Պայմանագրերի կառավարման բյուրոյի և Աշխատավարձի չափորոշիչների գրասենյակի (OWS) կողմից՝ համաձայն LAMC-ի բաժին 188.00-ի:

**Ավելին իմանալու համար կապվեք Աշխատավարձի չափորոշիչների գրասենյակի հետ՝ զանգահարելով 1-844-WAGESLA (924-3752), կամ էլ, նամակ ուղարկեք [wagesla@lacity.org](mailto:wagesla@lacity.org), կամ այցելեք <http://wagesla.lacity.gov/>:**